



Հարգելի պարոն Ալիխանյան,

Ի սրտե ցանկանում եմ շնորհավորել Ձեզ և Անանիա Շիրակացի ճեմարանին Մայքրոսոֆթի «Գործընկերներ ուսման ոլորտում» ծրագրի շրջանակներում իրականացվող «Նորարար դպրոցներ» միջազգային ծրագրի մասնակիցը դառնալու կապակցությամբ: Այս ծրագրին դիմել էին ավելի քան 114 դպրոցներ 48 երկրից: Եվ վերջապես բարդ ընտրության և բարձր մրցակցության արդյունքում ձեր դպրոցը դարձավ այն 56 ամենառաջավոր դպրոցներից մեկը, որոնք կմասնակցեն «Նորարար դպրոցներ» ծրագրին:

Ծրագրում ընդգրկված դպրոցներն ընտրվում են՝ իրենց ամբողջ ներուժով ստեղծելու ճկուն, փոխանցելի և վստահելի մոդելներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ և փոխանցել իրենց փորձն ու ստեղծված մոդելները այլ դպրոցների թե՛ իրենց երկրներում, թե՛ տարածաշրջանում և թե՛ ամբողջ աշխարհում:

Եվս մեկ անգամ հպարտությամբ շնորհավորում ենք Անանիա Շիրակացի ճեմարանին միջազգային հաջողության համար և ծրագրի ողջ ընթացքում պատրաստակամ ենք աջակցելու ցանկացած հարցում՝ Հայաստանը միջազգային հանրությանը ներկայացնելուն, ծրագիրը հաջողությամբ ճեմարանում իրականացնելուն, Ձեր փորձը այլ դպրոցներին ներկայացնելուն և միջազգային հանրությանը տարաբնույթ ծրագրերով ներկայանալուն:

Հարգանքով՝ Քրիստինե և Մայքրոսոֆթի հայաստանյան գրասենյակ

Kristine Gyonjyan
Academic Programs Manager
Microsoft Armenia

Tel.: +374 10 51 48 92
E-mail: i-krkyon@microsoft.com
<http://www.itn.am>
<http://www.mlg.am>

105/1, Terian Str., CITADEL Business Center, Office #801
Yerevan 0009, Republic of Armenia